**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 218 – Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 մասի 5-րդ կետի, 63-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի, 5-րդ մասի 1-ին պարբերության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկը **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 218-Ն որոշման(այսուհետ՝ որոշում)մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-րդ ենթակետի «3.077.836.600 (երեք միլիարդ յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3.098.896.900 (երեք միլիարդ իննսունութ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3.077.836.600 (երեք միլիարդ յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3.140.192.800 հազար դրամ (երեք միլիարդ մեկ հարյուր քառասուն միլիոն մեկ հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր)» թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3,6 հավելվածների

3. Լրացնել բյուջեի 4-րդ ,5-րդ հատվածները՝ համաձայն 4– 5 հավելվածների՝

1) բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը `41.295.843 (քառասունմեկ միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր քառասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ , այդ թվում՝ վարչական մասի մնացորդը՝ 39.822.167 (երեսունինը միլիոն ութ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր վաթսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մասի մնացորդը՝ 1.473.676 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուն երեք հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ ,

2) համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդից 12.902.600 (տասներկու միլիոն ինը հարյուր երկու հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել 2016 թվականի բյուջեով ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը,

3) համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 28.393.243 (քսանութ միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր քառասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ դրամ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս,

4. Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի առաջին եռամսյակի նախատեսված 77.744.700 (յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:

5.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Ռ.ՄԱՆՈՅԱՆ
Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԲԱԼԱԲԵԿՅԱՆ
Լ. ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝Հ.Աբիսողոմյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ–ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Որոշման ընդունումը պայմանավորված է

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի 1313–Ն որոշման պահանջների կատարման անհրաժեշտությամբ՝ կապված Գյումրի համայնքի այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ՀՀ քաղաքացիներին <<Այլընտրանքային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարման և փոխհատուցումների հետ:
2. Համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում << COMUS>> ծրագրի շրջանակներում գումարների տրամադրման հետ:
3. պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում գումարների փոփոխություն կատարելու հետ:
4. ավելացել են եկամուտները՝ 21.060.300 (քսանմեկ միլիոն վաթսուն հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
5. ծախսերը ավելացել են՝ 62.356.100 (վաթսուներկու միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից տարեսկզբի ազատ մնացորդ – 41295.9 հազ.դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ք.Գյումրի <<28>> փետրվարի 2017թ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման և Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218–Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ

Գյումրի համայնքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը՝ մասնակցությամբ անդամներ Լուսինե Սանոյանի, Կարեն Միքայելյանի, Արմեն Տոնոյանի, Կարինե Թաթարյանի, 2017 թվականի փետրվարի 25-28-ը ներառյալ, կազմակերպեց և իրականացրեց ուսումնասիրություններ՝ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման և Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի բյուջեում կատարվելիք փոփոխությունների և լրացումների մասին նախագծերի վերաբերյալ:

**Ուսումնասիրման նպատակը՝** պարզել վերը նշված նախագծերի համապատասխանությունը տվյալ ոլորտում գործող՝ պարտադիր կիրառման ենթակա, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին, խորհրդատվական բնույթի նշանակություն ունեցող մեթոդական ցուցումների պահանջներին, ինչպես նաև Գյումրի համայնքի զարգացման 2017-2021 թթ. հնգամյա ծրագրի առաջին տարում նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշներին:

**Եզրակացություն՝** «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218–Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218–Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերը դրական եզրակացությամբ ներկայացնում է Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ին կայանալիք հերթական նիստի քննարկմանը:

______________________ **Լուսինե Սանոյան-հանձնաժողովի նախագահ**

_________________________**Կարեն Միքայելյան-հանձնաժողովի անդամ**

____________________________**Արմեն Տոնոյան-հանձնաժողովի անդամ**

________________________**Կարինե Թաթարյան-հանձնաժողովի անդամ**